

դան Ս. Հոբիփսիմեանց (Ազթ. 123). եւ Եղիշէ ականատես էր մեր Եղարու բողոք տիկնանց «գինեբեր այգեաց» (174): Որթարուծութեան այս մեծ ջանքը կը տեւէ միշտ. Ներսէս կթղ. Շինող՝ որ է դարուն Զուարթնոց չքնաղ դաստակերտը կառոյց, չմոռցաւ անոր շուրջը սփռել «այգիս եւ ծառատունկս» (Սեր. 186): Պատահամար կը յիշուի Ժ. դարուն՝ Գունի մերձաւոր ընդարձակ «այգեստանին», բաժնուած «ի փողոցս» (Որբ. 138). եւ Թովմայի յաւելուածն ուշադրութեամբ ցոյց կու տայ Ռշտունեաց գաւառը, որ Գազկայ հոգածութեամբ՝ «այգեւէտ բազմութեամբք յոյժ վայելչացեալ զարգարի» (Արծ. 327): Խաղաղութեան որ եւ է միջոցի մը մէջ Հայոց առաջին գործը կը լինէր «տնկել այգիս» (Յհ. կթղ. 250): Եւ հայ ժողովուրդը մեծ աղմկով ու երգերով կը կատարէր իւր այգեկութը (Լաստ. 40):

Նկատելով ուրեմն այգեգործութեան այս մեծ խնամքը, դիւրաւ կրնանք ըմբռնել մեծին Ներսեսի մառանաց նկարագիրը Փաւստոսէ, որ կ'ըսէ՝ թէ անոր բացակայութեան իւր բարեսիրտ տեղապահը Խաղ՝ «սպառէր թափէր զամենայն... մառանս գինւոյն, եւ զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղքատաց» (108):